

# ԲԱՐԵԿԱՄ

Ճշմարիտ բարեկամութիւնը հիմնական կը գտնուի իմաստուններուն, մարդասերներուն ու առաքինիներուն մէջ: Ուստի ով, որ մէկու մը հետ հաւատարիմ բարեկամութիւն ունի՝ նշան է, թէ ունի նաեւ իմաստութիւն կամ մարդասեր բարձ ու բարւոճ կենցաղավարութիւն: Այդպիսիներուն հետ մարդիկ կը յօժարին ու կը ջանան բարեկամութիւն ընել: Իսկ ան, որ ոչ մէկ բարեկամ ունի, նշան է թէ տգէտ է կամ մարդատեսաց, կամ մոլի, որովհետեւ այսպիսի մարդոցմէ ամէնքը կը խուսափին:

Ճշմարիտ բարեկամութիւնը բարիներու ու չարերու փոխադարձ հաղորդութիւնն է, որպէսզի բարիներուն յաջողութիւններով՝ չարերուն սրտերը ուրախանան եւ բարիներուն՝ չարերուն հանդէպ կարեկցութեամբ չարերուն տրտմութիւնները թեթեւան, այլապէս բարեկամութիւնը կը փոխարինուի շահասիրութեան:

Ճշմարիտ բարեկամներուն յատուկ է միմեանց հաւատարիմ ըլլալ, իսկ հաւատարիմներուն յատուկ է միմեանց հետ սերտ բարեկամութիւն ունենալ:

Բարեկամներէն գրկուիլը աւելի դառն ու ցաւալի է, քան ունեցուածքէ գրկուիլը, որովհետեւ ունեցուածքը թշնամիները կը շատցնէ ու իրեն ձեռք բերողի հանգիստը կը ցրուէ, իսկ բարեկամութիւնը թշնամիները կը նուազեցնէ ու բարեկամին հանգստութիւն կը նուիրէ:

**Շարունակելի**


## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԷՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ  
ՀՈԳԵԲՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

### ՈԳԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Այս հարցին կապակցութեան մինչեւ այսօր ալ տարակարծութիւններ կան: Իսկապէս Սամուէլի ոգին յայտնուեցա՞ւ, թէ՛ ոչ: Այս խնդիրը այսօր եւս կը դրուի ու կը քննարկուի: Ոգեհմայութեամբ զբաղող շատ մը անձեր համոզուած են, որ խօսած են Պօղոսի, Լուսերի եւ ուրիշներու ոգիներուն հետ: Բայց աչքառու է այն իրողութիւնը, որ նշուած ոգիները ոգեհաններու հետ զարմանալիօրէն ստոր բաներու մասին կը խօսին: Օրինակ, Պօղոս առաքեալը երկրաւոր իր կեանքի ընթացքին համակուած էր միակ մտածումով մը՝ ազատիլ իր մարմինէն եւ Քրիստոսի հետ ըլլալ: Եւ հիմա, որ կը վայելէ Աստուծոյ որդի ըլլալու ուրախութիւնը, անոր հոգին հրաշալի, վեհ խօսքեր պիտի չըսուէ՞ր: Բայց, երբ մեռելահարցուկները «անոր ոգին» կը կանչեն, որեւէ բարձր գաղափարի մասին չի՛ խօսիր, այլ՝ հակառակը, յաճախ կոպիտ ու անպարկեշտ բաներ կ'ըսէ:

Պայծառակերպութեան լերան վերայ, երբ Մովսէսն ու Եղիան Յիսուս Քրիստոսի յայտնուեցան, խօսեցան անոր այս աշխարհէն ելքի մասին: Բայց այն ոգիները, որ մեռելահարցուկները կը կանչեն, առաջին հերթին իրենք գիրենք կը ներկայացնեն իրրեւ վերոյիշեալ մարդոց ոգիները:



## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԸՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ  
(Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 12 ՓԵՏՐՈՒԱՐ, 2012 ԹԻՒ 7

### ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 7.37-52

### Ե. ԶԿՆԻ ԾՆՆԴԵԱՆ

Տօնին վերջին եւ հանդիսաւոր օրը, Յիսուս ոտքի կանգնած՝ բարձրաձայն կ'ըսէր. -- Ով որ ծարաւ է՝ թող ինձի գայ եւ խմէ: Ով որ ինձի կը հաւատայ,

ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ՝ «Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բխին»: Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. իսկ Հոգին տակաւին չէր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր: Ժողովուրդէն ոմանք երբ լսեցին այս խօսքերը, ըսին. -- Ասիկա է նշմարիտ մարգարէն:

Ուրիշներ կ'ըսէին. -- Քրիստոսն է: Իսկ ոմանք ալ կ'ըսէին. -- Միթէ Գալիլեայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: Սուրբ գիրքը չ'ըսեր՝ թէ Քրիստոս Դաւիթ թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի քաղաքին՝ Բեթլեհեմի մէջ պիտի ծնի:

Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան ժողովուրդին մէջ: Ոմանք ուզեցին ձեռքալալ զինք, բայց ոչ ոք համարակցեալ ձեռք գարնել: Երբ տանարին պահակները վերադարձան, աւագ ֆահանգներն ու Փարիսեցիները հարցուցին անոնց. -- Ինչո՞ւ զինք հոս չբերիք: Պահակները պատասխանեցին. -- Այս մարդուն պէս խօսող երբեք չենք տեսած:

Փարիսեցիները ըսին. -- Ի՞նչ, դո՞ւք ալ խաբուեցաք: Իշխանաւորներէն կամ Փարիսեցիներէն ոեւէ մէկը հաւատաց անոր: Մեր Օրէնքը չգիտցող տգէտ ամբօր միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած են:

Նիկողեմնոս, Փարիսեցիներէն մէկը, որ նախապէս գիշերով եկած էր Յիսուսի մօտ, ըսաւ անոնց. -- Արդեօք մեր Օրէնքը մարդս կը դատէ՞ նախքան զինք լսելը եւ գիտնալը թէ ի՞նչ ըրած է:

Անոնք պատասխանեցին Նիկողեմնոսի. -- Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէն ես: Բննէ՛ Սուրբ գիրքերը եւ պիտի տեսնես, թէ Գալիլեայէն մարգարէ չ'ըլլեր: Ապա ամէն մարդ իր տունը դարձաւ:

## Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս. Սահակ Պարթեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի տոհմէն, Մեծն Ներսէս Կաթողիկոսի որդին էր: Անոր ապրած կեանքի, վարած հայանպաստ քաղաքականութեան մասին մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ հինգերորդ դարու պատմիչ՝ Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմութեան» աշխատութեան մէջ:

Սահակ Պարթեւ Հայրապետ ծնած է Կեսարիա, 384 թուականին: Սուրբ կը ստանայ յունական կրթութիւն եւ կը դառնայ հմուտ ժամանակակից երաժշտական ու հռետորական արուեստին եւ փիլիսոփայութեան: Ս. Սահակ կ'ապրի իր հօր հոգածութեան ներքեւ: Թէեւ քաջ գիտակ էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն գրականութեան, բայց աւելի խելամուտ էր Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Կը սիրէր աղօթել եւ լեցուն էր Աստուծոյ Հոգիով ու շնորհներով: Չափահաս դառնալէն ետք շրջապատը կը ստիպէ, որ Ս. Սահակ Պարթեւ մնայ աշխարհական, որպէսզի շարունակուի Լուսաւորչի տոհմը: Ան յաճախ Աստուծոյ կը խնդրէ, որ իրեն արու գաւակ մը պարգեւէ: Սակայն կը ծնի Սահականուշը:

Վաղարչապատ մայրաքաղաքի մայր եկեղեցւոյ մէջ Աւագ Հինգշաբթի օր, պատարագի ընթացքին, Ս. Սահակ, որպէս սարկաւագ պէտք է սպասաւորեր:

Պատարագի աւարտին, երբ ան նստած էր Ս. Սեղանին մօտ, վրան թմրութիւն մը կու գայ: Աստուծոյ հրեշտակը լուսաւոր մարդու կերպարանքով կ'երեւի եւ կը յայտնուի, որ պիտի դադրի Լուսաւորչի տան քահանայապետութիւնը, իսկ Արչակունեաց թագաւորութիւնն ալ պիտի խափանուի:

Ս. Սահակ կը նուիրուի քահանայապետական կարգին եւ միաժամանակ կը հոգայ եկեղեցւոյ պէտքերը: Իր Սահականուշ զուտըն ալ կնութեան կու տայ Համագասպ Մամիկոնեանին: 387-ին, կը ձեռնադրուի կաթողիկոս:

Հակառակ տիրող քաղաքական անբարենպաստ պայմաններու, հայոց Վռամշապուհ թագաւորի եւ Ս. Սահակ կաթողիկոսի համատեղ ջանքերով երկիրը կ'ապրի խաղաղութեան մէջ ու կը բարգաւաճի: Վռամշապուհ բարեպաշտ թագաւորի օգնութեամբ ձեռնամուխ կ'ըլլայ բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ կառուցելու եւ միաժամանակ կը նորոգէ Ս. Հռիփսիմեանց վկայարանը: Որոշ ժամանակ ետք միաբանելով Ս. Մեսրոպի հետ՝ կը զբաղի հայոց նշանադիրներ գտնելու սուրբ գործով: Իր աշակերտները կ'ուղարկէ գանազան քաղաքներ, որպէսզի գտնեն բազմաթիւ օգտակար գիրքեր, հայերէնի թարգմանեն եւ գործածեն հայոց դպրութեան մէջ: 417-ին Ս. Սահակ կը դիմէ Կայսեր եւ Կ. Պոլսոյ պատրիարքին, իր թողան՝ Վարդան Մամիկոնեանի հայոց սպարապետ ճանչնալու խնդրանքով: Կայսրն ու Պատրիարքը յարգելով Հայրապետը կ'ընդառնեն անոր խնդրանքին:

## ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՈՒՐԴՆԵՐԸ

#### ՊՍԱԿԻ ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Երբ անուսիններէն մէկը կամք անկախ պատճառով կորսուի, կը լուծուի անուսնութիւնը:

Այո. եթէ ամուսնացեալներէն մին կամ միւսը կորսուի եւ եօթը տարի որեւէ լուր եւ տեղեկութիւն չառնուի անոր մասին, կրնայ ամուսնանալ, եթէ ուզէ: Եւ եթէ եօթը տարի անցնելէ ետք երեւան գայ կորսուած կողմը, ան ալ ազատ է ամուսնանալու ուրիշի մը հետ:

Դարձեալ, եթէ ամուսիններէն մէկը փոխէ իր քրիստոնէական հաւատքը, կամ անբուժելի հիւանդութիւններով տառապի եւ խախտէ ամուսնական կեանքի միութիւնն ու խորհուրդը, հոգեւոր իշխանութիւնը մարդասիրական մասնաւոր կարգադրութիւններ կ'ընէ:

Պողնկութիւն եւ շնութիւն, ըստ Աւետարանի, կը խախտեն ամուսնական միութիւնը եւ կը կեղծեն խորհուրդը, հետեւաբար կը լուծուի ամուսնութիւնը եւ յանցաւոր կողմը կը դատապարտուի եւ կը զրկուի վերստին ամուսնութեան իրաւունքէն:

Եթէ երկուքն ալ մեղապարտ են եւ պատասխանատու իրենց պսակի ապականութեան, կամ եթէ երկու կողմերն ալ Ֆիզիքապէս եւ բարոյապէս անընդունակ եղած են ամուսնական կեանք կազմելու եւ տեղի տուած են գայթակղութիւններու, կը լուծուի ամուսնութիւնը եւ երկու կողմերն ալ կը զրկուին վերստին ամուսնանալու իրաւունքէն:

## ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

### Ի՞նչ է Տեառնընդառաջը:

Քառասնօրեայ Յիսուսի տաճար տանելու օրուան յիշատակն է: Մովսէսի օրէնքին համաձայն Յովսէփ եւ Մարիամ քառասնօրեայ Յիսուսին տաճար տարին՝ Տիրոջ առջեւ հանելու (Տեառն ընդ առաջ): Հրեաներու մօտ, սովորութիւն էր, որ արու ունեցող մայրերը նախ եօթը օր սպասէին իրրեւ անմաքուր, ութերորդ օրը թլփատէին տղուն, երեսուներկու օր եւս սպասէին: Այնուհետեւ յաջորդ քառասուներորդ օրը, արու գաւակին պիտի տանէին տաճար՝ Տիրոջ առջեւ ընծայելու համար:



Տեառնընդառաջը կը զուգարդիպի Փետրուար ամսուն 14-ին (Յունուար 6+40 օր) եւ անշարժ է: Որպէս Տէրունական տօն՝ Փետրուարի 13-ի երեկոյեան կը կատարուի նախատօնակ, մոմեր վառելով եկեղեցւոյ սեղանի մոմէն, հաւատացեալները ատոնք կը տանին տուն:

### ԱՌԱԿՆԵՐ

Իմաստութիւնը ցանապարհներուն սկիզբը կը փառաբանուի եւ հրապարակներուն վրայ բարձրաձայն կը հռչակուի. պարիսպներուն բարձունքէն կը քարոզուի, ամրոցներուն դռներուն կը յայտարարուի եւ քաղաքներու դարպասներուն համարձակօրէն կը թօսուի:

(Սուսկաց 1.20-21)

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻՆ ԳԻՐՔԵՆ  
63.18- - 64.12**

Ձրլլայ որ ընդմիշտ կորսնցնենք Սիոնը, քու սուրբ լեռդ. որովհետեւ ահա մեր թշնամիները առժամաբար տիրեցին մեզի, ոտնակոխ ըրին քու սրբարանդ, ու մենք եղանք առաջուան նման, երբ տակաւին մեր Տէրը չէիր դուն, երբ դեռ քու անունդ չէինք կրեր:

Եթէ երկինքը պատռէիր եւ երկիր իջնէիր՝ լեռները քու դիմացդ պիտի դողային ու հալէին մոմի պէս, ինչպէս կրակը կ'այրէ անտառները եւ կը շոգիացնէ ծովերը. հակառակորդներդ պիտի ֆանչնային քու անունդ եւ հեթանոսներ պիտի դողային քու դիմացդ. միշտ ինչպէս քանիցս իջար եւ անսպասելի հրաշագործութիւններէդ լեռները սասանեցան:

Որեւէ ականջ երբեք լսած չէ, որեւէ աչք տեսած չէ Աստուած մը, բացի քեզմէ, որ իրեն յուսացողներուն ողորմի այնպիսի գործերով որ դուն ըրիր: Դուն օգնութեան կը հասնիս բոլոր անոնց որոնք ուրախութեամբ արդարութիւն կը գործեն եւ քու ֆամբաներէդ կը ֆայն: Բայց մեզի դէմ բարկացած ես հիմա, որովհետեւ մեզք գործեցիմք եւ մոլորեցանք:

Մեղով վարակուած եւ պղծուած ենք բոլորս ալ. մեր արդար սեպած գործերն իսկ գարշելի են քեզի համար: Մեր անօրէնութիւններուն պատճառով չոր տերեւներու պէս կը թափթփինք եւ հովերը կը ֆշեն մեզ: Ա՛լ աղօթող չկայ քեզի, չկայ մէկը որ սթափելով քեզի ապաւինի. երես դարձուցիր մեզմէ եւ մեր մեղքերուն պատճառով մեզ նեղութեան մատնեցիր:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ  
ՏԻՏՈՍԻՆ**

1.1-11

*Ես, Պօղոս, Աստուծոյ ծառան եւ Յիսուս Քրիստոսի առաքեալը, կոչուած եմ Աստուծոյ ընտրեալները բերելու հաւատքի եւ ճշմարտութեան ճանաչումին, այն ճշմարտութեան՝ որ աստուածապաշտութեամբ կը գտնուի, որպէսզի յաւիտենական կեանքի յոյսը ունենան: Յաւիտենական ժամանակներէն իսկ առաջ՝ անսուտն Աստուած ինք խոստացաւ այդ կեանքը, իսկ հիմա՝ յարմար ժամանակը հասած համարելով՝ այդ խոստումը յայտնեց իր Աւետարանով, որուն քարոզութեան կոչուեցայ մեր փրկիչ Աստուծոյն հրամանով:*

*Ո՛վ Տիտոս, մեր հասարակաց հաւատքի ճամբով իմ հարազատ որդիս, թող Հայրն Աստուած եւ մեր փրկիչը Քրիստոս Յիսուս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:*

*Քեզ կրեա՛նք թողուցի, որպէսզի եկեղեցիին պէտքերը հոգաս եւ զայն կազմակերպես՝ իւրաքանչիւր քաղաքի մէջ երէցներ կարգելով, ինչպէս որ քեզի պատուիրեցի: Երիցութեան թեկնածուն պէտք է անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր ըլլայ եւ հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք անառակութեամբ եւ անհնազանդութեամբ ամբաստանուած չըլլան: Արդարեւ, եպիսկոպոսը՝ որպէս Աստուծոյ տնտեսը՝ պէտք է անմեղադրելի ըլլայ: Պէտք չէ յանդուգն, բարկացող, զինեմոլ, կռուազան կամ շահամոլ ըլլայ, այլ՝ հիւրասէր, բարին սիրող, զուսպ, արդար, մաքուր եւ ժուժկալ: Պէտք է ամբօրէն պահէ իր սորված վստահելի վարդապետութիւնը, որպէսզի կարենայ ուղիղ ուսուցումով յորդորել ուրիշները եւ յանդիմանել հակառակորդները:*